



---

1 / 2

Կոնֆերանսը կազմակերպել էին փոքրամասնության հարցերով Եվրոպական կենտրոնը, ՄԱԿ-ի մարդու իրավունքների հարցերով գերագույն կոմիսարի գրասենյակը և Նիդեռլանդների դեսպանությունը:

Կոնֆերանսը բացեցին փոքրամասնության հարցերով Եվրոպական կենտրոնի տարածաշրջանային գրասենյակի ղեկավար տիկին Եվա Չիլինսկին, ՄԱԿ-ի մարդու իրավունքների հարցերով գերագույն կոմիսարի Անդրկովկասյան գրասենյակի մարդու իրավունքների հարցով ավագ խորհրդական պարոն Վլադիմիր Շկոլնիկովը և Վրաստանում Նիդեռլանդների դեսպանի տեղակալ տիկին Անջել Սամուրան:

Կոնֆերանսին զեկուցումներով հանդես եկան Վրաստանի վերինտեգրման հարցերով պետական նախարար պարոն Պաասա Ջաքարեիշվիլին, կրոնի և համոզմունքների ազատության հարցով ՄԱԿ-ի հատուկ զեկուցող պարոն Հայներ Բիլեֆելդը և ուրիշներ:

Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանն իր ելույթում անդրադարձ կատարեց հայոց և վրաց Եկեղեցիների միջեկեղեցական հարցերին: Շահե վարդապետը նշեց Հայոց Եկեղեցու դերը Հայաստանում դավանանքի ազատությանը աջակցության գործում:

Լևոն Իսախանյանը ներկայացրեց Վիրահայոց Թեմը և Թեմին անհանգստացնող հրատապ հիմնախնդիրները, ինչպես նաև Վրաստանի կառավարությանը ներկայացրեց հանձնարարականներ՝ ուղղված այնպիսի հիմնադրության հարցերի կարգավորմանը, ինչպիսիք են խորհրդային ժամանակաշրջանում բռնագրավված հայկական տաճարները Վիրահայոց Թեմին վերադարձնելը և Վրաստանի բոլոր կրոնական կազմակերպությունները համամասնորեն ֆինանսավորելու մեխանիզմի մշակման անհրաժեշտությունը: